

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	Նորատուս
ՄԱՐԶ	Գեղարքունիք



1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գեղարքունիքի մարզում, Գավառագետի աջ ափին, Գավառից 5 կմ հյուսիս-արևելք է գտնվում Նորատուս գյուղը, որը Գեղարքունի գավառի հնագույն բնակավայրերից է, ուր պահպանվել են բազմաթիվ հուշարձաններ: Նորատուսը համարվում է խաչքարերի անտառ:

Գյուղի կենտրոնում գտնվում է Սուրբ Աստվածածին եկեղեցին, հարավարևելյան եզրին՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին և մեծ գերեզմանատունը: Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է Գեղարքունիքի Սահակ իշխանը 9-րդ դարի վերջին: Ճարտարապետական հորինվածքով այն «գմբեթավոր սրահ» տիպի կառույց է, 7-րդ դարի շինությունների համեմատ ունի սեղմ համաչափություններ, ընդգծված ելուստներով որմնամույթեր և համեմատաբար փոքր տրամագծով գմբեթ: Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որ կառուցվել է հավանաբար 9-10-րդ դարերում, եղել է միանավ թաղածածկ շինություն, որը հետագայում վերափոխվել է գմբեթավոր սրահի (X-XI դդ., ճարտարապետ Խաչատուր):

Նշանավոր է գյուղի հարավային մեծ գերեզմանատունը իր բազմաթիվ խաչքարերով: Պահպանվել են հնավանդ կոթողներ և հուշայուների բեկորներ, վաղ շրջանի խաչքարեր: Մեծամասնություն են կազմում XIII-XVII դդ. խաչքարերը, որոնց զգալի մասը խմբավորված են, կազմելով այս կամ այն ընտանիքի գերեզմանատունը: Հանդիպում են փոքրիկ, հատակագծում ուղղանկյուն դամբարաններ, որոնց վրա դրված են խաչքարեր: Առավել շատ են առանձին կանգնած պատվանդանների վրա բարձրացող խաչքարերը: Նորատուսում գործել են մի շարք տաղանդավոր քարգործ վարպետներ, կազմողներ՝ Մելիքսեթ կազմողը, Ներսեսը, Քիրամը և ուրիշներ:

Նորատուսի մոտ, Շոռ-Գյուլ կոչված վայրում բացված բրոնզի ու երկաթի դարերի դամբարաններում հայտնաբերվել են միկարասանի, երկկարասանի և խմբակային թաղումներ: Նորատուսի դամբարաններից գտնվել են բրոնզե գոտի, նետասլաքներ, ապարանջաններ, ուլունքներ, երկաթե դաշույն, կավամաններ և այլն:

Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղում գտնվող միջնադարի ճարտարապետական բարձր ոճով քանդակված խաչքարերը տեսնելու են գալիս աշխարհի տարբեր երկրներից հազարավոր տուրիստներ:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Նորատուս համայնքը հիմնադրվել է 1828-1830թթ. Արևմտյան Հայաստանի Բայազետ քաղաքից և նրան հարակից գյուղերից գաղթածների կողմից, սակայն գյուղն ունի ավելի հին պատմություն, ինչի մասին վկայում են 11-րդ դարում կառուցված Ս.Սարգիս և 13-րդ դարում կառուցված Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները: Համայնքի բնակչության հիմնական զբաղմունքներն են անասնապահությունը և հողագործությունը: Համայնքում գործում են հացի, փայտամշակման, քարի մշակման, քարե սալիկների պատրաստման արտադրամասեր:

3.ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին(°C)	-20°
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին(°C)	+20°

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից 1.1) 1.2) 1.3)	
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Կամո
3. Համայնքի հեռավորությունը`	
3.1) մայրաքաղաքից (կմ)	98
3.2) մարզկենտրոնից (կմ)	5
3.3) պետական սահմանիցուղիղ գծով (կմ)	55
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	5
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	1
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1930
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	6634
6. Սահմանակից համայնքների անվանումները	Արծվաքար, Գավառ, Հայրավանք
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	noratus.gegharqunik@mta.gov.am
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	noratus.am
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	093-42-38-01
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	-
11. Համայնքի հեռախոսային կոդը	0264
12. Համայնքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	1213
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	Այո
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	Այո

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	6138
2. Գրանցված ծնունդների քանակը	68
2. Սահացության դեպքերի քանակը	41
3. Ամուսնությունների քանակը	-
4. Ամուսնալուծությունների քանակը	-
5. Տնային տնտեսությունների թիվը	1830
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	300
7. Կենսաթոշակառուների քանակը	814
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	250

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2018թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	1
3. Երաժշտական դպրոցների քանակը	-
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	2
5. Հանրակրթական դպրոցների քանակը	3
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	-
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	-
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	-
9. Մարզադպրոցների քանակը	-

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ ²)	3.460.000մ ²
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	-
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	1250

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆ

	2018թ.
1.Հողեր, ընդամենը (հա)	3528
2.Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	3528
3.Բնակավայրերի ընդհանուր տարածքը(հա)	6634
4.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	1920
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	320
7. Խոզերի գլուխաքանակը	50
8. Գյուղատնտեսական տեխնիկա	
8.1 տրակտորներ (քանակը)	20
8.2 կոմբայններ (քանակը)	5
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1.Էլեկտրական ենթակայանների քանակը	27
2.Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Այո
3.Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	Այո
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	Այո

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	35.9
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	-
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	-
6.2 Էքսկավատորների քանակը	-
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	-
6.4 Գրեյդերների քանակը	-
6.5 քանակը	-
6.6 Աղբատար մեքենաների քանակը	1
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	-
6.8 Վակուումային փոշեկուլմեքենաների քանակը	-
6.9 Ավտոաշտարակների քանակը	-
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	15
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	Ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	Ոչ

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը եկամուտներ	167,494.200	146,380.315
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդթվում`		
2.1 հողի հարկ	13,440.400	6,622,082
2.2 գույքահարկ	28,417.000	23,616,912
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը		
3.1 դոտացիա	95,648,400	95,648,400
3.2 սուբվենցիա	3,934,400	3,934,400
4. Սուտք երհողի օտարումից	12,000,000	5,196.390

Համայնքի վարչական բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	155,494.200	139,165.465

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	12,000.00	5,196.390

Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
--	------------------	---------

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

1. Ընդամենը ծախսեր	18,830.000	2,540.000
--------------------	------------	-----------

11.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1.Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից` 1.1 համայնքային ծառայողներ	19 7
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	55.284.0
3. Ավագանու անդամների թվաքանակը	10

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
1.Նորատուս համայնքի Սևանի փողոցի և Սևանի փողոցի թիվ 3 նրբանցքների փոսային նորոգում	Աշխատանքներ են իրականացվելու 2019թ.-ի ընթացքում:
2.Համայնքի փողոցների բարեկարգում	Աշխատանքներ են իրականացվելու 2019թ.-ի ընթացքում:
3.Համայնքապետարանի վարչական շենքի կառուցում	
4.Նորատուս համայնքի արտաքին լուսավորության համակարգի ընդլայնում	Աշխատանքներ են իրականացվելու 2019թ.-ի ընթացքում:
5.Նորատուս համայնքի Գրիգոր Դադիկյան և Հովհաննես Թումանյան փողոցների, Գր. Լուսավորիչ, Գր. Նարեկացի, Վ. Մամիկոնյան փողոցների որոշակի հատվածների, Սևանի փողոցի 13 նրբանցքի բարեկարգում և ասֆալտապատում:	